ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-2-1-Ա

ք. Երևան 13.03.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի մարտի 13-ի նիստում քննարկեց 2017 թվականի փետրվարի 14-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ SWATCH AG (SWATCH SA) (SWATCH LTD) (Jakob-Stämpfli-Strasse 94 CH-2502 Biel/Bienne) ընկերության «SWATCH ONE MORE THING» (IR1261460) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 4-րդ, 94-րդ կետի 3-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «ONE MORE THING» արտահայտությունը օգտագործվել և օգտագործվում է մինչ օրս տարբեր սուբյեկտների կողմից և տարբեր ոլորտներում, օրինակ՝ հայտնի “COLOMBO” դետեկտիվ հեռուստասերիալում Կոլոմբոյի կողմից, Apple.Inc ընկերության հիմնադիր Ստիվ Ջոբսի կողմից, Swatch AG ընկերության կողմից և այլն: Այն դարձել է համընդհանուր ընդունված արտահայտություն, որի օգտագործման բացառիկ իրավունքը չի կարող տրամադրվել որևէ անձի:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային

նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն ներկայացված ապրանքային նշանում առկա «ONE MORE THING» արտահայտությունը լայն օգտագործման արդյունքում համընդհանուր է դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում և դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարող տրամադրվել որևէ անձի:

Բողոքարկողը պնդեց իր տեսակետը, որ ներկայացված ապրանքային նշանը համընդհանուր չի դարձել և կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ «SWATCH ONE MORE THING» (IR1261460) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ